ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2025 թվականի № 1524-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 2/1 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ (ՎԿԱՅԱԿԱՆ N08072025-08-0045) ԹՎՈՎ 18 (ՏԱՍՆՈՒԹ) ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «ԳՅՈՒՄՐԻԻ ԷՑՇ» ԲԲԸ-ի տնօրեն Սիլվարդ Բեկչյանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №10146 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Ղանդիլյան փողոց 2/1 բնակելի շենքի կառուցման և սպասարկման համար համար առանձնացված 690.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը և 169.07 քառակուսի մետր գումարային ներքին մակերեսով ընդհանուր օգտագործման տարածքները համարել բաժանվող մասերի ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրի քաղաք, Ղանդիլյան փողոց 2/1 բնակելի շենք հասցեագրությամբ անշարժ գույքից (վկայական N08072025-08-0045) թվով 18 (տասնութ) մասերի բաժանված անշարժ գույքերը հասցեավորել համաձայն հավելվածի.

2025-07-24 14:28:43 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գյումրի համայնքի ղեկավարի

2025թ. նոյեմբերի 24-ի

N 1524-Ն Ա որոշման

Գյումրի քաղաք, Ղանդիլյան փողոց 2/1 բնակելի շենք հասցեագրությամբ անշարժ գույքից (վկայական N08072025-08-0045) թվով 18 (տասնութ) մասերի բաժանված անշարժ գույքերի հասցեավորում

| № | Բնակարանի մակերեսը (քառակուսի մետր) | Հասցեն |
|---|---|---|
| 1. | 87.9 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ.Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 1 բնակարան |
| 2. | 66.3 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 2 բնակարան |
| 3. | 70.8 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 3 բնակարան |
| 4. | 66.1 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 4 բնակարան |
| 5. | 89.1 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 5 բնակարան |
| 6. | 80.1 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 6 բնակարան |
| 7. | 75.4 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 7 բնակարան |
| 8. | 56.9 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 8 բնակարան |
| 9. | 78.0 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 9 բնակարան |
| 10. | 55.1 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 10 բնակարան |
| 11. | 96.2 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 11 բնակարան |
| 12. | 51.0 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 12 բնակարան |
| 13. | 71.0 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 13 բնակարան |
| 14. | 69.1 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք,14 բնակարան |
| 15. | 80.9 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 15 բնակարան |
| 16. | 73.4 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 16 բնակարան |
| 17. | 69.4 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 17 բնակարան |
| 18. | 89.7 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 6/5 շենք, 18 բնակարան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2025 **թվականի** N 1523-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի N 2638-Ա որոշման հիման վրա կազմված անշարժ գույքի առուվաճառքի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի (գրանցված սեղանամատյանում N 9547) պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Համլետ Զարմանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-24 11:54:46 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հուլիսի 2025 **թվականի** N 1522 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 1616-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Արշակ Առաքելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հունիսի 04-ին N 7276 թվագրմամբ) և այն հանգամանքը, որ ավտոտնակ չի տեղադրվել՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Արշակ Առաքելյանին ժամանակավոր մետաղական ավտոտնակ տեղադրելու նպատակով 20.0 քառ.մ մակերեսով հողամաս կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1616-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արշակ Առաքելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-23 09:51:30 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» հուլիսի 2025 **թվականի** N 1521-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ N 17/1 ՀԱՍՑԵԻ ՄԱՌԱՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի Այվազովսկու փողոց 3-րդ նրբանցք N 17/1 հասցեի մառանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Արթուր Ալբերտի Բաղդասարյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03112021-08-0059 վկայականը):

Քաղաքացի Արթուր Բաղդասարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Այվազովսկու փողոց 3-րդ նրբանցք N 17/1 հասցեի 26,46 (քսանվեց ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով մառանի գործառական նշանակությունը որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով Արթուր Բաղդասարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 11-ին N 9646 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել Արթուր Ալբերտի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Այվազովսկու փողոց 3-րդ նրբանցք N 17/1 հասցեի 26,46 (քսանվեց ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով մառանի գործառական նշանակությունը որպես բնակելի տուն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Արթուր Բաղդասարյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-07-23 16:56:38 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2025 թվականի № 1520Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 7/1 ՇԵՆՔ 25 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 81.42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Մուշ-2 թաղամաս 7/1 շենք 25 բնակարան հասցեագրությամբ 81.42 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մուշ-2 թաղամաս, 7/1 շենք, 25 բնակարան**

2025-07-23 16:27:48 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2025 թվականի № 1519-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 7-1 ՇԵՆՔ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0083-0091-001) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Մուշ-2 թաղամաս 7-1 շենք հասցեագրությամբ անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-0083-0091-001) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մուշ-2 թաղամաս, 7/1 շենք**

2025-07-22 16:36:19 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2025 թվականի № 1518-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 7 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2376349) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Գյումրի տեքստիլ» ԲԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Գարիկ Մկրտչյանի լիազորված անձ Վանուհի Ավագյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №9795 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Գ. Նժդեհի փողոց 7 հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2376349) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գ. Նժդեհի փողոց, 7/63 շինություն**

2025-07-23 16:28:39 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հուլիսի 2025 թվականի N 1517-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ «Ք. ԳՅՈՒՄՐԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 252 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻՆ ԿԻՑ «ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

## ՈՐՈՇՈւՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «ք. Գյումրի Աբովյան փողոց 252 շենքի հյուսիսային պատին կից «Պատմական Հայաստան» պատի կառուցման շինարարական աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով ՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Գագիկ Մանուկյան – Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Աշոտ Պետրոսյան – Գյումրու համայնքի ղեկավարի խորհրդական

3) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պարտականությունները կատարող,

4) Արմինե Սարգսյան– Գյումրու համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ,

5) Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«23» նոյեմբեր 2025 թվականի N 1516-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ «Ք. ԳՅՈՒՄՐԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 252 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻՆ ԿԻՑ «ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «ք. Գյումրի Աբովյան փողոց 252 շենքի հյուսիսային պատին կից «Պատմական Հայաստան» պատի կառուցման շինարարական աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Գագիկ Մանուկյան – Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Աշոտ Պետրոսյան – Գյումրու համայնքի ղեկավարի խորհրդական

3) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պարտականությունները կատարող,

4) Արմինե Սարգսյան– Գյումրու համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ,

5) Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2025 թվականի N 1515-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՃԵՐՄԱԿ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ-ՇԵՆՔԻ, ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՋՐԱՅԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿԱԹԳԾԻ 62/63 ՀԱՍՑԵՈՎ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար հրատապ բաց մրցույթի միջոցով Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող «Ճերմակ հիվանդանոց» սահմանափակ պատասխանատվության ընկերության տեղական պատմամշակութային հուշարձան-շենքի,Գյումրի համայնքի «Գյումրու ջրային մարզաձևերի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի և Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող երկաթգծի 62/63 հասցեով շենքի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով ՝

Հանձնաժողովի նախագահ՝
1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝
2)Դմիտրի Մանվելյան –Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,
3)Սերգեյ Մուրադյան -Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ,
4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝
6)Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«23» նոյեմբ. 2025 **թվականի** N 1514-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՃԵՐՄԱԿ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ-ՇԵՆՔԻ, ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՋՐԱՅԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿԱԹԳԾԻ 62/63 ՀԱՍՑԵՈՎ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար հրատապ բաց մրցույթի միջոցով Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող «Ճերմակ հիվանդանոց» սահմանափակ պատասխանատվության ընկերության տեղական պատմամշակութային հուշարձան-շենքի,Գյումրի համայնքի «Գյումրու ջրային մարզաձևերի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի և Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող երկաթգծի 62/63 հասցեով շենքի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հենրիկ Գասպարյան– Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Կարեն Մխիթարյան – Գյումրու համայքնապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

գ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովիկ Ղազարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյան:

2. Սույն որոշումն  ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ.  ք. Գյումրի

23

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

<<23>> հուլիսի 2025 թվականի N 1513 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐԻԻ Ա. ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԽՈՐԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Խորեն Գուրգենի Վարդանյանի 2025 թվականի հուլիսի 21-ի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրիի Ա.Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն ) տնօրեն Խորեն Գուրգենի Վարդանյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հուլիսի 26-ից:

**2.** Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2025 թվականի հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 6-ը ներառյալ:

**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Խորեն Գուրգենի Վարդանյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության դասատու Սուսաննա Կոլյայի Զոհրաբյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Խորեն Գուրգենի Վարդանյանին և Սուսաննա Կոլյայի Զոհրաբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2025 **թվականի** N 1512-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ն. ՇՆՈՐՀԱԼԻ ՓՈՂՈՑԻ № 19/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 29.64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ն. Շնորհալի փողոցի № 19/2 հասցեի բնակելի տունը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Նաիրա Տոնոյանին, Սուսաննա Ղայթմազյանին, Գևորգ Արզումանյանին, Անահիտ Գրիգորյանին, Գոհար Խնուսյանին, Դանիել Գրիգորյանին (հիմք՝ սեփականության վկայագիր № Ա021042 և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրված 2023թվականի նոյեմբերի 18-ին № 121):

Քաղաքացի Սուսաննա Ղայթմազյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող, Գյումրի քաղաքի Ն. Շնորհալի փողոցի № 19/2 հասցեի շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 29.64 (քսանինն ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամաս ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, հնարավոր չէ օտարել աճուրդով, որպես առանձին գույքային միավոր, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 23-ի N 25-Ա որոշումը և քաղաքացի Սուսաննա Ղայթմազյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի սեպտեմբերի 16-ին № 15623 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Նաիրա Հայկազի Տոնոյանին, Սուսաննա Սուրենի Ղայթմազյանին, Գևորգ Հայկազի Արզումանյանին, Անահիտ Դանիելի Գրիգորյանին, Գոհար Դանիել Խնուսյանին Դանիել Հայկազի Գրիգորյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Ն. Շնորհալի փողոցի № 19/2 հասցեի բնակելի տան պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 29.64 (քսանինը ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 311634 (երեք հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել Նաիրա Հայկազի Տոնոյանի, Սուսաննա Սուրենի Ղայթմազյանի, Գևորգ Հայկազի Արզումանյանի, Անահիտ Դանիելի Գրիգորյանի, Գոհար Դանիել Խնուսյանի Դանիել Հայկազի Գրիգորյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սուսաննա Ղայթմազյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-23 10:00:42 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

miD

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2025 թվականի № 1511-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 1186.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0240-0005-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարսի խճուղու հարևանությամբ գտնվող 1186.32 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0240-0005-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կարսի խճուղի, 25/8 հողամաս**

2025-07-22 16:30:54 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2025 թվականի №1510-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 2,9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 2,9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 09-ի №1374–Ա որոշումը, հողամասի ու շինությունների հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Մուսայելյան փողոց 9 հասցեի բնակելի տան հողամասին կից 2,9 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 2,9 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Ազնավուրի փողոց, 9/1 բնակելի տուն**

2025-07-22 13:45:00 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հուլիսի 2025 **թվականի** N 1509-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ № 169/12 ՀԱՍՑԵԻ 257.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ղ. Ղուկասյան փողոց № 169/12 հասցեի 257.5 (երկու հարյուր հիսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Սակայն պայմանավորված փաստացի քաղաքաշինական իրավիճակով և տարածքի կառուցապատման նախագծի պահանջներով հանդիսանում է ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողեր:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ղ. Ղուկասյան փողոց № 169/12 հասցեի 257.5 (երկու հարյուր հիսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2025-07-17 12:18:55 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
նոյեմբերի 22-ի N 1508-Ա որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության կիոկուշին-կան կարատե-դո գավաթի մրցումներին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գևորգյան Սարգսյան | Դայանա Քրիստինե | Մարզիկ ծնող | AR0291397 | 220541022384000 | 5.900 |
| 2. | Մանուկյան Մանուկյան | Էդվարդ Լիլյա | Մարզիկ ծնող | 010249423 | 220063186971000 | 5.900 |
| 3. | Մկրտչյան Մկրտչյան | Հովհաննես Գարիկ | Մարզիկ ծնող | AR0603579 | 11802060611700 | 5.900 |
| 4. | Հակոբյան Հակոբյան | Սամվել Ալվարդ | Մարզիկ ծնող | AL0286919 | 11800722717600 | 5.900 |
| 5. | Մելքոնյան Ղարիբյան | Հայկ Ռուզաննա | Մարզիկ ծնող | 011161965 | 1570053795227900 | 5.900 |
| 6. | Դարբինյան Դարբինյան | Ռուբեն Աշոտ | Մարզիկ ծնող | AR0633745 | 11802034042800 | 5.900 |
| 7. | Վարդանյան Վարդանյան | Արամ Տիգրան | Մարզիկ ծնող | AR0330256 | 1570071970210100 | 5.900 |
| 8. | Գևորգյան Գևորգյան | Մկրտիչ Գևորգ | Մարզիկ ծնող | AP0555757 | 2050161069941001 | 5.900 |
| 9. | Ավագյան Անտոնյան | Յուրի Ամալյա | Մարզիկ ծնող | 008319089 | 1570094186640200 | 5.900 |
| 10. | Գլնջյան Մելքոնյան | Գրիգոր Անահիտ | Մարզիկ ծնող | AR0225037 | 1930097139376700 | 5.900 |
| 11. | Պապոյան | Արտաշես | Մարզիչ | AT0687859 | 15100567189771 | 6.700 |
| 12. | Կիրակոսյան | Ալեքսանդր | Մարզիչ | AU0673788 | 1570077837620100 | 6.700 |
| Ընդամենը | | | | | | 72.400 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

«22» հուլիսի 2025 **թվականի** N 1508-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՈԿՈՒՇԻՆ-ԿԱՆ ԿԱՐԱՏԵ-ԴՈ ԳԱՎԱԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության կիոկուշին-կան կարատե-դո գավաթի 2025 թվականի օգոստոսի 2-ին Տաշիր համայնքում կայանալիք մրցումներին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով կիոկուշին-կան կարատե-դո ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի հուլիսի 22-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության կիոկուշին-կան կարատե-դո գավաթի մրցումներին գործուղման ծախսերի 2025 թվականի օգոստոսի 2-ին Տաշիր համայնք գործուղել 10 մարզիկի և 2 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս) 72.400(յոթանասուներկու հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

**2025 թ. ք.Գյումրի** Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հուլիսի 2025 **թվականի** N 1507-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 284.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 59.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (46.44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Տիգրան Մեծ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 284.24(երկու հարյուր ութսունչորս ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 59.12(հիսունինը ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (46.44(քառասունվեց ամբողջ քառասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023FAVHFC ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Գյումրի քաղաքի Տիգրան Մեծ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 284.24(երկու հարյուր ութսունչորս ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 59.12(հիսունինը ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (46.44(քառասունվեց ամբողջ քառասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սուսաննա Թաթոսի Հարությունյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-07-21 14:44:30 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2025 թվականի №1506Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 6.25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1337-0001-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Մյասնիկյան փողոցի հարևանությամբ գտնվող 6.25 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1337-0001-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Մյասնիկյան փողոց, 43/1 հողամաս**

2025-07-22 10:19:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» նոյեմբերի 2025 թվականի №1505-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Խ. ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 150.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0460-0001-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խ. Կոշտոյան փողոցի հարևանությամբ գտնվող 150.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0460-0001-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Խ. Կոշտոյան փողոց, 14/12 հողամաս**

2025-07-22 12:02:03 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**ՈՐՈՇՈՒՄ**

**«22» հուլիսի 2025 թվականի N 1504-Ա**

**ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ՝ ԱԼՎԱՐԴ ՀՐԱՉՅԱՅԻ ԿՈՐԵՑԿԻԻ ԵՎ ՍԵՅՐԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԿՈՐԵՑԿԻԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2025 թվականի հուլիսի 18-ին Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մուշի բաժնի կողմից ահազանգ է ստացվել, որ Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց 29 բնակելի տանը գտնվող անչափահասներ՝ 25 օգոստոսի 2010 թվականին ծնված Ալվարդ Հրաչյայի Կորեցկին (ծննդյան վկայական՝ ԱԲ №075759) և 19 մայիսի 2013 թվականին ծնված Սեյրան Հրաչյայի Կորեցկին (ծննդյան վկայական՝ ԱԲ №261987) հայտնվել են կյանքի դժվարին իրավիճակում:

Վերոնշյալ հասցեի բնակելի տունը գտնվում է խարխլված վիճակում և բնակության համար պիտանի չէ:

Անչափահասներ՝ 25 օգոստոսի 2010 թվականին ծնված Ալվարդ Հրաչյայի Կորեցկին, 19 մայիսի 2013 թվականին ծնված Սեյրան Հրաչյայի Կորեցկին և 23 փետրվարի 2015 թվականին ծնված Նելլի Հրաչյայի Կորեցկին միայնակ մոր երեխաներ են:

Տնայցի ժամանակ պարզվել է, որ երեխաների մայրը՝ Անի Սեյրանի Կորեցկին կազմել է նոր ընտանիք իր հետ տանելով անչափահաս՝ Նելլի Հրաչյայի Կորեցկիին, լքել է իր երկու անչափահաս երեխաներին՝ Ալվարդ Հրաչյայի Կորեցկիին և Սեյրան Հրաչյայի Կորեցկիին թողնելով Հրաչյա Սեյրանի Այվազյանի խնամքին, իսկ վերջինս էլ աշխատանքի բերումով հաճախակի է բացակայում տանից և պատշաճ չի զբաղվում նրանց խնամքով և դաստիարակությամբ:

Ելնելով անչափահաս երեխաների լավագույն շահից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 26 մայիսի 2016 թվականի N 551-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 21-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Անչափահասներ՝ 25 օգոստոսի 2010 թվականին ծնված Ալվարդ Հրաչյայի Կորեցկիի (ծննդյան վկայական՝ ԱԲ №075759) և 19 մայիսի 2013 թվականին ծնված Սեյրան Հրաչյայի Կորեցկիի (ծննդյան վկայական՝ ԱԲ №261987) հետագա խնամքը և դաստիարակությունը կազմակերպել «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում շուրջօրյա բաղադրիչով:

2025-07-22 11:56:56 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թվական քաղաք Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2025 թվականի №1503-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 450.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0317-0016-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան 1-ին թաղամասում գտնվող 450.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0317-0016-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Վ. Սարգսյան 1-ին թաղամաս, 30/10 հողամաս**

2025-07-22 12:03:17 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2025 թվականի №1502Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 5/8 (ՎԿԱՅԱԿԱՆ №14072025-08-0068) ԵՎ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 34/3 (ՎԿԱՅԱԿԱՆ №21112019-08-0002) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի միավորման սխեման, հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Թբիլիսյան խճուղի 5/8 (վկայական №14072025-08-0068) և Թբիլիսյան խճուղու 3-րդ թաղամաս 34/3 (վկայական №21112019-08-0002) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղի, 5/8 հողամաս**

2025-07-22 09:52:35 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2025 թվականի № 1501-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 378.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0315-0003-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան 1-ին թաղամասում գտնվող 378.38 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0315-0003-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Վ. Սարգսյան 1-ին թաղամաս, 94/25 հողամաս**

2025-07-22 12:47:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» «հուլիսի» 2025 ԹՎԱԿԱՆԻ N 1500-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի «ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» N 85 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Կարեն Սոկրատի Էլբակյանը (անձնագիր՝ AT0422444, տրված՝ 2020 թվականի մարտի 24-ին, 016-ի կողմից) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի փետրվարի 24-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 85 որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 31-րդ կետի 3-րդ ենթակետում Էլբակյան Արմեն Ռուբենի հայրանունը «Սոկրատի»-ի փոխարեն գրվել է «Ռուբենի» (հիմք՝ ծննդյան վկայական թիվ VII-ՍԼ № 250507, տրված՝ 1989 թվականի դեկտեմբերի 20-ին, Լենինական քաղաքի Շիրակի շրջանային ՔԿԱԳ բաժնի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Կարեն Սոկրատի Էլբակյանի 2025 թվականի հունիսի 26-ի դիմումը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ 8802 թվագրությամբ), **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի փետրվարի 24-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 85 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) 31-րդ կետի 3-րդ ենթակետում «Ռուբենի» բառը փոխարինել «Սոկրատի» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարեն Սոկրատի Էլբակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

2025-07-22 11:55:20 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ., ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2025 թվականի № 1499Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑ (ԼԵՆԻՆԻ ՊՈՂՈՏԱ) 11 ՇԵՆՔ 3Ա ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №455435) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Էմմա Դավթյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված № 9953 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Տիգրան Մեծի փողոց (Լենինի պողոտա) 11 շենք 3ա բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №455435) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Տիգրան Մեծի փողոց, 11 շենք, 3/1 բնակարան**

2025-07-22 12:18:04 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հուլիսի 2025 **թվականի** N1498-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N 1/1 ՀԱՍՑԵԻ 55,65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Հովհաննես Շիրազի փողոց 1-ին նրբանցք 1/1 հասցեի 55,65 (հիսունհինգ ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Հովհաննես Շիրազի փողոց 1-ին նրբանցք 1/1 հասցեի 55,65 (հիսունհինգ ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2025 **թվականի** N 1497- Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 18/1 ՀԱՍՑԵԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Հ. Մազմանյան փողոց 18/1 հասցեի օժանդակ շինությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Հայաստան Սիրեկանի Մկրտչյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 14022025-08-0060 վկայական):

Քաղաքացի Հայաստան Սիրեկանի Մկրտչյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Հ. Մազմանյան փողոց 18/1 հասցեի 69,1 (վաթսունինն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինության գործառական նշանակությունը, որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Հայաստան Սիրեկանի Մկրտչյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի ապրիլի 09-ինN 4688 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Հ. Մազմանյան փողոց 18/1 հասցեի 69,1 (վաթսունինն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինության գործառական նշանակությունը, որպես բնակելի տուն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Հայաստան Սիրեկանի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հունիսի 2025 **թվականի** N1496-Ա

## 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ ՏՐՎԱԾ N22/24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լիանա Չոփույանին Գյումրի քաղաքի Անտառավան 3-րդ թաղամաս 26/1 հասցեով հողամասում բնակելի տան(արտաքին մակ.- 231.84 քառ.մ; երկրորդ կատեգորիա) և պարսպի նոր կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար, այդ թվում կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների տեղադրման համար 2024 թվականի ապրիլի 2-ին տրվել է 22/24 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2024 թվականի ապրիլի 2-ին տրվել է 22/24 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2025 **թվականի** N1495-Ա

## 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՏՐՎԱԾ N100/12 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կարեն Ներսիսյանին և Լիլիթ Նալբանդյանին Գյումրի քաղաքի Խր. Հայրիկ փողոց 46/3 հասցեով բնակելի մասով առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցման աշխատանքների կատարման համար 2012 թվականի հոկտեմբերի 15-ին տրվել է N100/12 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2012 թվականի հոկտեմբերի 15-ին տրված N100/12 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

2025-07-21 10:17:40 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2025 **թվականի** N1494-Ա

**2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ ՏՐՎԱԾ N05/24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաքել Ոսկանյանին Գյումրի քաղաքի Ջ. Եսայան փողոց 52/1 հասցեով հողամասում կիսակառույց բնակելի տունը որպես սպասարկման մասով բնակելի տան կառուցման համար 2024 թվականի փետրվարի 23-ին տրվել է N05/24 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2024 թվականի փետրվարի 23-ին տրված N05/24 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիս 2025 **թվականի** N1493-Ա

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ԻՆ ՏՐՎԱԾ N25/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արամ Խաչատրյանին Գյումրի քաղաքի Հարավարևելյան շրջանցող ճանապարհի 1-ին նրբանցք 22/1 հասցեում անհատական բնակելի տան կառուցման համար 2023 թվականի մարտի 22-ին տրվել է N25/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2023 թվականի մարտի 22-ին տրված N25/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ու Մ

«21» հուլիսի 2025 **թվականի** N 1492-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ԹԱԹՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ № 11/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 188.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (156.47 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սուսաննա Թաթոսի Հարությունյանին պատկանող (հիմք՝ ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներ № 2007248, № 1991057, № 2300081, № 2528401) Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց № 11/1 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 188.4 (մեկ հարյուր ութսունութ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններ:
Քաղաքացի Սուսաննա Թաթոսի Հարությունյան դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ բնակելի շինությունները օրինականացնելու խնդրանքով:
Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023CS9K76 ծածկագիրը, քաղաքացի՝ Սուսաննա Թաթոսի Հարությունյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մարտի 21-ին № 5389 թվագրմամբ )՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Սուսաննա Թաթոսի Հարությունյանին պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց № 11/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 188.4 (մեկ հարյուր ութսունութ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 513390 (հինգ հարյուր տասներեք հազար երեք հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սուսաննա Թաթոսի Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-07-21 12:46:20 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հուլիս 2025 **թվականի** N1491 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 1167-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի հունիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հարավարեվելյան շրջանցող ճանապարհի № 11/1 հասցեում գտնվող 4.46 քառակուսի մետր արտաքին (4.46 քառակուսի մետր ներքին) մակերեսով պարիսպը 27.49 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Հակոբ Մկրտիչի Հակոբյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1167-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հարավարեվելյան շրջանցող ճանապարհի № 11/1 հասցեում գտնվող 4.46 քառակուսի մետր արտաքին (4.46 քառակուսի մետր ներքին) մակերեսով պարիսպը 27.49 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Հակոբ Մկրտիչի Հակոբյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1167-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Որոշման 2-րդ կետում «Ա. Շիրկացու փողոց N 25/10 » թվերը և բառերը փոխարինել « Հարավարեվելյան շրջանցող ճանապարհի № 11/1 » թվերով և բառերով:

2025-07-21 12:57:56 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հուլիսի 2025 **թվականի** N1490 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 474-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց № 14 հասցեում գտնվող 103.39 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 355.6 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ իրավունքի ճանաչման մասին» N 474-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղի ունեցած անհամապատասխանության պատճառով (հիմք՝ ըստ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին № Կ-16072025-08-0137 ՀՀ կադաստրի կոմիտեի որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց № 14 հասցեում գտնվող 103.39 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 355.6 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ իրավունքի ճանաչման մասին» N 474-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) Որոշման 1-ին կետում «հասցեում» բառը փոխարինել «հասցեին» բառով:
2) Որոշման 1-ին կետում «հասցեում» բառից հետո լրացնել «կից տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող » բառերով:

2025-07-21 09:32:33 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2025 թվականի N1489 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 2 ՇԵՆՔ 22 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՎ LEXUS GX 470 ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՍԵՅՐԱՆ ԱՐԹՈՒՐԻ ՅԱՅԼՈՅԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԵՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ 1/5 ԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2025 թվականի հուլիսի 09-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց 55/5 տան բնակիչ՝ Աննա Սամվելի Մովսիսյանը (նույնականացման քարտ՝ 007128705)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 05 մայիսի 2009 թվականին ծնված Սեյրան Արթուրի Յայլոյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №303419) Գյումրի քաղաքի Մ.Խորենացու փողոց 2 շենք 22 բնակարանի մասնաբաժինը և LEXUS GX 470 մակնիշի ավտոմեքենայի 1/5 բաժինը:

Երեխայի հայրը՝ Արթուր Սեյրանի Յայլոյանը մահացել է 2024 թվականի սեպտեմբերի 23-ին (հիմք՝ մահվան վկայական *004440287*):

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Սեյրան Արթուրի Յայլոյանը (հիմք՝ 10 հունիսի 2025 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 10062025-08-0002):

Նիստին ներկա գտնվող անչափահասի մայրը՝ Աննա Սամվելի Մովսիսյանը հայտնեց, որ իր ընտանիքին է պատկանում նաև Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց 55/5 բնակելի տունը, որտեղ և ներկա պահին բնակվում են (հիմք՝ տեղեկանք N 255, տրված՝ 09.07.2025 թվականին «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության կողմից):

Նիստին ներկա գտնվող երեխայի մայրը՝ Աննա Սամվելի Մովսիսյանը հայտնեց, որ իր անչափահաս երեխան՝ Սեյրան Արթուրի Յայլոյանը ժառանգ է հանդիսանում LEXUS GX 470 մակնիշի 2004 թվականի արտադրության նույնացման համարը (vin)՝ JTJBT20X540056527 ավտոմեքենայի 1/5-րդ մասից, որի պատկանելիությունը ժառանգատուին հաստատված է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայության ԳՅՈՒՄՐԻ ՀՔԲ (6)-ի հաշվառման-քննական ստորաբաժանման կողմից 05/12/2017թ.-ին տրված թիվ 06BB455926 տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված՝ 21/05/2025 թվականին Հայաստանի Հանրապետության «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ» նոտարական տարածքի նոտար՝ Ռոբերտ Տոլիկի Մուկուչյանի կողմից գրանցված է գրանցամատյանում թիվ 737 ժառանգական գործ թիվ 1111):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Սեյրան Արթուրի Յայլոյանը տվել է համաձայնություն իր բնակարանի մասնաբաժնի և ավտոմեքենայի 1/5 բաժինը վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան

օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Աննա Սամվելի Մովսիսյանի 2025 թվականի հուլիսի 09-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 9477 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 15-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Աննա Սամվելի Մովսիսյանին (նույնականացման քարտ՝ 007128705) վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 05 մայիսի 2009 թվականին ծնված Սեյրան Արթուրի Յայլոյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №303419) Գյումրի քաղաքի Մ.Խորենացու փողոց 2 շենք 22 բնակարանի մասնաբաժինը, բնակարանի վաճառքը նպաստելու է բնակարանային պայմանների բարելավմանը:
2. Համաձայնություն տալ Աննա Սամվելի Մովսիսյանին (նույնականացման քարտ՝ 007128705) վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 05 մայիսի 2009 թվականին ծնված Սեյրան Արթուրի Յայլոյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №303419) LEXUS GX 470 մակնիշի ավտոմեքենայի 1/5 բաժինը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Սամվելի Մովսիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-18 16:18:31 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թվական քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2025 թվականի N 1488 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԳԱՐԻՊԻԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ VAZ 21120 ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2025 թվականի հուլիսի 11-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 9 փողոց 7/1 շենք 10 բնակարանի բնակիչ՝ Գևորգ Գարիպիլի Մանուկյանը (անձնագիր՝ AP0511827, տրված՝ 19.09.2016 թվականին 016-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 02 հոկտեմբերի 2008 թվականին ծնված Տիգրան Գևորգի Մանուկյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №257177) VAZ 21120 մակնիշի ավտոմեքենան:

Վերոնշյալ մակնիշի ավտոմեքենայի սեփականատեր է հանդիսանում անչափահաս՝ Տիգրան Գևորգի Մանուկյանը (հիմք՝ 26 հունիսի 2021 թվականին գրանցված տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 09XX284135):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Տիգրան Գևորգի Մանուկյանը տվել է համաձայնություն իր ավտոմեքենան վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Գարիպիլի Մանուկյանի 2025 թվականի հուլիսի 11-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 9579 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 15-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Համաձայնություն տալ Գևորգ Գարիպիլի Մանուկյանին (անձնագիր՝ AP0511827) վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 02 հոկտեմբերի 2008 թվականին ծնված Տիգրան Գևորգի Մանուկյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №257177) VAZ 21120 մակնիշի ավտոմեքենան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Գարիպիլի Մանուկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

16:17:25 GMT-4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թվական քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ու Մ

«21» հուլիսի 2025 **թվականի** N 1487 Ա

**«ԳՐԱՆԴ ՀՈԹԵԼ ԱՊՐԻԿՈՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՇԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 218 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Գրանդ Հոթել Ապրիկոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտաշես Բաղդասարյանի (ՀՎՀՀ՝ 01314143, գրանցման ամսաթիվը՝ 2021 թվականի սեպտեմբերի 09-ին) 2025 թվականի հուլիսի 11-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հուլիսի 11-ին 9606-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.

1. Թույլատրել «Գրանդ Հոթել Ապրիկոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտաշես Բաղդասարյանին Գյումրի քաղաքի Աբովյան 218 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գրանդ Հոթել Ապրիկոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտաշես Բաղդասարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**2025 թվական ք. Գյումրի** Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2025 **թվականի** N1486-Ա

**«ԳՐԱՆԴ ՀՈԹԵԼ ԱՊՐԻԿՈՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՇԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 218/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Գրանդ Հոթել Ապրիկոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտաշես Բաղդասարյանի (ՀՎՀՀ՝ 01314143, գրանցման ամսաթիվը՝ 2021 թվականի սեպտեմբերի 09-ին) 2025 թվականի հուլիսի 11-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հուլիսի 11-ին 9604-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Գրանդ Հոթել Ապրիկոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտաշես Բաղդասարյանին Գյումրի քաղաքի Աբովյան 218/1 հասցեում իրականացնել ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գրանդ Հոթել Ապրիկոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտաշես Բաղդասարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**2025 թվական ք. Գյումրի** Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2025 **թվականի** N1485-Ա

**«ԳՐԱՆԴ ՀՈԹԵԼ ԱՊՐԻԿՈՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՇԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 218/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Գրանդ Հոթել Ապրիկոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտաշես Բաղդասարյանի (ՀՎՀՀ՝ 01314143, գրանցման ամսաթիվը՝ 2021 թվականի սեպտեմբերի 09-ին) 2025 թվականի հուլիսի 11-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հուլիսի 11-ին 9603-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Գրանդ Հոթել Ապրիկոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտաշես Բաղդասարյանին Գյումրի քաղաքի Աբովյան 218/1 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գրանդ Հոթել Ապրիկոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտաշես Բաղդասարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**2025 թվական ք. Գյումրի** Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2025 թվականի №1484 Ա

**ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵՎՈՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0236-0022, 08-001-0236-0026) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով 17.07.1995 թվականի առուվաճառքի պայմանագիրը, չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի հատակագիծը, քաղաքացի Լևոն Կարապետյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №9644 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Առուվաճառքի պայմանագրով քաղաքացի Լևոն Կարապետյանին պատկանող անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր 08-001-0236-0022, 08-001-0236-0026) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Բուլվարային փողոց, 1-ին փակուղի, 35 կիսակառույց**

2025-07-15 15:51:39 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի